ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2024թ. թիվ 832-Ա

ԱՐԱՅԻԿ ԺՈՐԱՅԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ «ԼԵՌՆԱՊԱՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի թիվ 129-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 783-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Քոչարյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արայիկ Ժորայի Քոչարյանին նշանակել «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

2. Ա.Քոչարյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 17-ից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 16
ք.Վանաձոր